ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՂՔԻ ՀԻՆԱՎՈՒՐՑ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Սողքի Սոնասար բնակավայրից տասը կիլոմետր հեռու, բարձրադիր հովտում տարածքի գյուղապետ Անդրանիկ Կյուրեղյանը 2010 թ. պատահաբար հայտնաբերել է հինավուրց դամբարան: Կրաքարե ծածկասալը ջարդելով նա մտել է դամբարան (աղ. I, 1): Հուշարձանը կառուցապատված է անմշակ խոշոր վեմերով (երկար. մոտ 2 մ, լայն. մոտ 1.50 մ, բարձր. մոտ 1.50 մ): Դատելով տեղադրությունից՝ հանգուցյալը հուղարկավորվել է երկար պատի մոտ գտնվող բազալտե սարկոֆագում (աղ. I, 2): Դամբարանի շքեղ գտածոները ոսկուց, արծաթից եւ բրոնզից են: Հայտնաբերված նյութերը հուշում են, որ հանգուցյալը գեղեցիկ սեռի ոչ շարքային ներկայացուցիչ է: Դամբարանի թալանված վիճակը հնարավորություն չի տալիս դատելու նյութի ամբողջության մասին: Այդուհանդերձ նյութերը արտակարգ հետաքրքիր են եւ թույլ են տալիս որոշել, թե դամբարանը երբվանից գոյություն ունի : Իր բովանդակած իրերից եւ այլ եղանակով մեզ հասած լուսանկարներից դատելով՝ պակասում են ոսկե եւ արծաթյա որոշ իրեր: Ջանանք լուսանկարների հիման վրա ներկայացնել դամբարանը:

Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Սողքը Սյունիքի վեցերորդ գավառն է: Զբաղեցնում էր 1402 քառ. կմ տարածք: Աղահեճք գաւառը գտնվում էր Աղուան գետի (այժմ Հագարու) վերին հոսանքի տարածքում[1]: Գահնամակում «Սիւնեաց երկրորդ» իշխանությունը փոխարինել է Ծավդեից իշխանությանը, որը հիշատակվում է նաեւ «Զորանամակում» ու Ե. դարի հայ հեղինակների երկերում[2]: Սյունյաց աշխարհը պատմական աղբյուրներում հայտնի է իր հանքերով, այդ թվում՝ ոսկու: Դրա լավագույն ապացույցներն են Սիսիանի կառավարչի[3] եւ Սողքի անտիկ դամբարանները:

Սոնասարի դամբարանի գտածոների մեծ մասը աղերսվում է Սիսիանի կեղծ թա-

1 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 32. **Ս. Տ. Երեմյան**, Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում (93-66 մ.թ.ա.) Ծաղեք, Վայկունիք,Աղաւնոյգետ. նույնի «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.)». նշված տարածքը Սաւդք, (Ծաղեք). Վայկունիք:

2 Տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Գահնամակի թվագրման հարցի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թ. 2, Երեւան, էջ 58, 70, 71:

3 Տե՛ս **Ժորես Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես) «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 21, Երեւան, 2009, աղ. I-XI:

ղով իշխանական դամբարանի նյութերի հետ: Երբեմն նույնիսկ թվում է, որ դրանք կերտվել են նույն վարպետի կողմից կամ նույն արհեստանոցի արտադրանք են[4]:

Փայտե գահավորակի ձեւավոր ոտքերին փաթաթած բրոնզե (17) թիթեղները վկայում են, որ դրանք տեղադրված են եղել սարկոֆագի եւ մյուս երկայնական պատի միջեւ եղած հատվածում (աղ. II, 1, 2, 3, աղ. III, 1, 2, 3): Այս խմբին պատկանող չորս նմուշներից բաղկացած թերեւս ավելի գեղեցիկ մի խումբ մեզ չի հասել:

Դամբարանի գտածոների մեջ բազմազանությամբ աչքի են ընկնում սկավառակաձեւ երկու անցքով ծածկոցը եւ զգեստը հարդարելու ոսկե բարակ թիթեղից, դրոշմելու եղանակով պատրաստված, տարբեր չափերի վարդյակները, որոնք երեք խումբ են: Առաջինը քանակով ավելի շատ է (48 հատ, տրամագիծը 13 մմ), ուռուցիկ զարդերով, կրկնակի շրջագծով, երկու անցքով (աղ. IV, 4): Երկրորդ խումբը (10 հատ, տրամագիծը 12 մմ), կենտրոնական, շեշտված ուռուցիկ գնդիկով, երկու անցքով եւ մեկ շրջագծով (աղ. V, 1, 2): Երրոդ խումբը փոքրաթիվ է (22 հատ, տրամագիծը 11 մմ), կենտրոնական ելուստով, առանց շրջագծի (աղ. V, 2): Կարծում ենք՝ երկրորդ եւ երրորդ խմբի ոսկե սկավառակաձեւ վարդյակները լրիվ մեզ չեն հասել: Սողքի (Սոնասարի) սկավառակաձեւ, զգեստը հարդարելու համար արված երկու անցքով եւ ընդհանրապես ետեւում նման մեկ կամ երկու օղակով, կամ եզրին ամրացված գլանաձեւ խողովակով զարդերը տարածված էին հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանում: Այդպիսիք Հայաստանում հայտնաբերվել են Գառնի ամրոցից եւ դամբարանից[5], Օշականի[6], Սիսիանի[7] Աշնակի[8] դամբարաններից, Վրաստանից՝ Սամադլոյից[9], Ժինվալիից[10], Բակտրիայից՝ Թիլյա-Թեփեից[11], Հյուսիսմերձսեւծովյան շրջաններից՝ Չերտոմլիկի կուրգանից[12] եւ այլ վայրերից: Ուշադրության արժանի է ոսկե օվալաձեւ կենտրոնով ձգվող ակոսով, դրանից աջ ու ձախ պատկերված գծիկներով՝ երկու ծայրին անցքերով (երկ. 15.9 մմ) զարդը, որը կաուրիի (խխունջ) ընդօրինակություն է (աղ. VI, 1): Կասկածից վեր է, որ դա զետեղվել

4 Տե՛ս անդ:

5 Տե՛ս **Ж. Д. Хачатрян**. Гарни V. Античный некрополь (результаты раскопок 1956-1972 гг.). “Археологические раскопки в Армении”, թ. 15, Ереван, 1976, էջ 105, նկ. 41, աղ. XX,1:

6 **С. А. Есаян, А. А. Калантарян**. Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983 гг., “Археологические раскопки в Армении”, թ. 18, Ереван, 1988, էջ 66, նկ. 5:

7 Տե՛ս **Ժորես Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես), էջ 45, աղ. XVI, 10, 15-17:

8 **Ժորես Խաչատրյան**, Հայաստանի հելլենիստական շրջանի ոսկին (մ.թ.ա. III- I դդ.), Հայաստանի ուշ անտիկ դարաշրջանի ոսկերչությունը (I-V դդ.), Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ-մ.թ. XIV դար), Երեւան, 2007, էջ 194-218, աղ. CXXII, 5, 6, CXXIII, 1:

9 Տե՛ս **Ю. М. Гагошидзе**. Самадло, Тбилиси, 1979, էջ 74, աղ. IX, 19:

10 Տե՛ս **Р. М. Рамишвили**, Археологические изыскания в зоне строительства Жинвальского гидротехнического комплекса в 1976-1979гг., Археологические исследования на новостройках Гр. ССР, Тбилиси, 1982б, էջ 36, աղ. XIII, 2: **Р. М. Рамишвили**. Новые открытия на новостройках Аракского ущелья. Краткие сообщения, N151, Античные памятники Колхиды Иберии. “Наука”, 1977, էջ 116, նկ. 2,1. Կանացի դամբարան:

11 Տե՛ս **В. И. Сарианиди.** Афганистан: Сокровища безимянных царей, Москва, 1983, էջ 32 и 33-ի նկարը, թաղում 1,3,4. **V. Sariandidi**. Bactrian gold, from the excavations of the Tillja-Tepe necropolis in North Afghanistan. Leningrad, 1985, Abb (125 հատ), 125 (415 մեծ, 313 միջին, 447 փոքր):

12 Տե՛ս **А. Ю. Алексеева**. Нашивные бляшки из Чертомликского кургана, в сб. “Античная торевтика” Ленинград, 1986, էջ 65, նկ. 7а, б:

է ոսկե, ինչ-որ զարդի շարանի, կամ պարզապես ուլունքաշարի մեջ: Ծովային զանազան ձեւերի խխունջները շատ տարածված էին Հայաստանում: Հանդիպում են տարբեր ժամանակաշրջանների բնակավայրերում (Գառնի), (աղ. VI, 2) եւ դամբարաններում[13]: Ներմուծվել են Միջերկրականի եւ Հնդկական օվկիանոսի ափերից [14]: Ծառայել են իբրեւ հուռութք, թալիսման, հմայական պահպանակ եւ այլն:

Իր հրաշագեղ տեսքով, մյուս զարդերից առանձնանում է ոսկե մանյակը (տրամագիծը 18 սմ): Քառակուսի կտրվածքով բրոնզե ոլորած լարը փաթաթվել է ոսկե բարակ թիթեղով, հյուսված նուրբ ոսկե թելը փաթաթել են ակոսների միջով: Այն ավարտվում է գլանաձեւ խողովակներով, որոնք երկու կողմից փակվում են օվալաձեւ ակնաբնով, կանաչ ապակիով մեդալյոնին (աղ. VI, 3): Մանյակը վեց տեղով կոտրված է: Ոսկյա թելերը հանված են: Մանյակի պատրաստման եղանակը նույնն է, ինչ Սիսիանի կառավարչի դամբարանից հայտնաբերված առյուծագլուխ ապարանջանը[15]: Նման հնարներով կերտված ոսկե եւ արծաթե ապարանջաններ, մանյակներ եւ այլ զարդեր մեծ քանակությամբ հայտնաբերվել են անտիկ աշխարհի տարբեր հնավայրերում[16]: Սակայն Իրանից եւ նրանից արեւելք ընկած տարածքներից նման օրինակ տեխնիկայով ու հարդարանքով, ոսկուց եւ այլ մետաղներից կերտված ոչ մի ապարանջան, մանյակ կամ այլ զարդ մեզ հայտնի չէ: Ակներեւաբար վերջիններս ունեն փոքրասիական ծագում: Չի բացառվում նաեւ այն, որ ստեղծված լինեն Հայաստանում, օտար ոսկերչի կողմից, տեղացի պատվիրատուի համար:

Երկրորդ ոսկե մանյակը բաղկացած է թռչունների գլխիկներից, որոնք իրարից անջատվում են մանր հատիկներով (աղ. VII, 1): Սնամեջ են (19 հատ, 17-ը ամբողջական, 2-ը բեկորային): Կոտրված է վեց մասի: Մանյակի մի մասը բացակայում է: Օվալաձեւ (3X2.5 սմ) հաստ ակնաբնի թխավուն ագաթե քարը օղակված, ընդելուզված է լայնաժապավեն շրջանակով, որի կենտրոնով անցնում է հատիկազարդ երկրորդ շրջագոտին (աղ. VII, 2, 3): Ակնաբնի տակի երկայնքով անցնող անցքը կախելու համար է: Հետեւը հարթ է, փակ: Քարի ուռուցիկ մակերեսին փորագիր պատկերված է աջ ոտքը առաջ (աղ. VII, 4-5) մեկնած գրիֆոն (intaglio): Փորագրությունը խորն է: Համաչափությունները պահպանված: Մանրամասների մշակումը կատարյալ է: Մագիլները երկար են ու սուր, բացած թեւերը հոծ գծերով են, սուր կտուցը բաց: Պոչը աղեղնաձեւ իջնում է ու բարձրանալով դառնում հորիզոնական: Զգացվում է, որ աշխատանքը հմուտ վարպետ-արհեստավորի ստեղծագործություն է:

Գրիֆոնները (գրիֆներ) - առյուծի մարմնով, արծվի գլխով առասպելական հրեշներ են[17]: Ժողովրդական հին հավատալիքներում գրիֆոնների դերը քիչ է եղել՝ իբրեւ

13 Տե՛ս **Կ. Հ. Кушнарева**. Древнейшие памятники Двина, Ереван, 1977, էջ 23, 93. **Т. С. Хачатрян**. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, էջ 243: **С. А. Есаян, А. А. Калантарян**. Ошакан, I, էջ 80, աղ. LX, 24. **Ի. Ա. Կարապետյան**, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», թ. 19, Երեւան, 2003, էջ 83, աղ. 54,10:

14 Տե՛ս **Ж. Д. Хачатрян**. Гарни V, էջ 109, նկ. 11, 5:

15 Տե՛ս **Ժ. Դ. Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը, էջ 29, աղ. XV, 3:

16 Տե՛ս անդ:

17 Տես «Դիցաբանական բառարան», թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյան, Երեւան, 1985, էջ 53:

հերալդիկ կենդանի: Հայտնի են ասորաբաբելական շրջանից[18], տարածված է նաեւ ուրարտական արվեստում[19]:

Գրիֆոնի պատկերները ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվում: Ձեռք են բերել պաշտամունքային հատկանիշներ: Տվյալ դեպքում Սողքի (Սոնասարի) դամբարանից հայտնաբերված գրիֆոնի աջ ոտքը առաջ մեկնած դիրքը նման է սրբազան կենդանիների մի ոտքը զոհասեղանի պարզած դիրքին[20]: Նմանատիպ կանգնած գրիֆոն է գտնվել Ջգուդերիից (Վրաստան): Այդպիսի կեցվածքով կանգնած հեծյալի կավե արձանիկներ մեծ քանակությամբ ի հայտ են եկել Արտաշատում (մ.թ. I-II դդ.)[21]: Նույն պատկերն է առկա Տիգրան III-ի (մ.թ.ա. 20-8 թթ.) դրամների դարձերեսին (առջեւի ոտքը բարձրացրած ձի)[22]:

Պարթեւստանի թագավորներ Միհրդատ I-ի (մ.թ.ա. 171-168 թթ.) եւ Գոթարզ II-ի (մ.թ. 41-45 թթ.)՝ Էկբատանում հատված դրամների դարձերեսին պատկերված ձիերը[23]:

Հինարեւելյան պաշտամունքային պակերների մեջ հաճախ են հանդիպում կենաց ծառի մոտ կանգնած, առջեւի ոտքը բարձրացրած սրբազան կենդանիներ, հորինվածք, որը սիմվոլիկ է եւ ունի պաշտամունքային նշանակություն[24]:

Այսպիսով, հավանաբար, ուշ հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանում, գրիֆոնի առաջ պարզած ոտքով պատկերը նույնպես շեշտում է նրա պաշտամունքային բնույթը: Այսինքն, գրիֆոնը ձեռք է բերել նոր հատկանիշ: Այս դեպքում հարկ է նշել, որ առյուծի եւ արծվի կերպարների միացումը գրիֆոնին, իբրեւ պաշտամունքային կենդանի, ավելի է հզորացնում: Սողքի գրիֆոնի փորագրությամբ թուխ քարով ոսկե մեդալյոնը, ոսկե շղթայով ծառայել է որպես թալիսման, որպես չար աչքից պահպանող, տիրոջն հզորություն տվող:

Սոնասարի դամբարանի նյութերից մեզ են հասել նաեւ երկու սնամեջ ոսկե մատանի: Ոսկյա բարակ, երկու ժապավենաձեւ շերտերը իրար հետ զոդելով ստացվել են սնամեջ կողեր (աղ. VIII, 1): Այս եղանակով պատրաստված ոսկե մատանիները լայն տարածում ստացան մ. թ. առաջին դարերում: Դրանց սնամեջ կողերի մեջ լցրել են ծծմբի մածուկ[25]: Դրանք դեպի վեր լայնանալով եւ փոքր-ինչ նեղանալով ստանում են հատած կոնի տեսք (աղ. VIII, 2): Կենտրոնում շրջանաձեւ կամ օվալաձեւ եւ բարձր ակնաբնում ագուցվում էր ակնաքարը, որից հետո ակնախորշի եզրերը ծալվում էին

18 Տե՛ս **Б. Б. Пиотровский.** Искусство Урарту. VIII-VI в.в. до н.э. , Ленинград, 1962, էջ. 45, 49, նկ. 11, աղ. X, XI:

19 Տե՛ս անդ:

20 Տե՛ս անդ **Г. М. Нешадзе**. Погребения иберийской знати из Згудери. "Краткие сообщения", թ. 151, "Античные памянтики Колхиды и Иберии". Москва. 1977. էջ 113, նկ. 8:

21 ***Ժորես Խաչատրյան***, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1981, թ. 2, էջ 65, 67, աղ. I, 2, ***Jaurés Khachatrian***. Arménie trésors de L'Arménie ancienne des origines au IVe siècle, Paris, 1996, N 249, cavalier (Mithra).

22 Տե՛ս **Զ. Պտուկեան**, Արտաշեսեան հարստութեան դրամները, Վիեննա, 1969, տախտ. 6, նկ. 291, տախտ. 4. նկ. 30:

23 Տե՛ս **D. Sellvood**, An entroduction to the coinage of Parthie. London, 1971, թ. 8/2, 24/25, 33/23:

24 Տե՛ս **Ժորես Խաչատրյան**, Իրանա-հայկական..., էջ 65: ***E. Stromenger - M. Hirmer*** . Fünt jahrtausende Messopotamien. München. 1962, էջ 269, 273:

25 Տե՛ս **М. И. Максимова**. Артюховский курган. Л., 1979, էջ 66, նկ. 19:

դեպի ներս (աղ. VIII, 3): Մ. թ. ա. Ա. դարի կեսերին ոսկերչական տեխնիկայի կատարելագործման արգասիք են կրելու համար հարմար թեթեւ սնամեջ մատանիներ, որոնց անցումը կողերից ակնաբուն շատ սահուն է[26]: Այս եղանակով են պատրաստված դամբարանի մատանիները: Նմանօրինակ երեք մատանիներ հայտնաբերվել են Սիսիանի դամբարանից, որոնց զարդաքարերը չեն պահպանվել[27]:

Մատանիները, որպես շքեղ զարդ՝ կրել են հասարակության բոլոր խավերը՝ ըստ դիրքի եւ կարողության: Մատանին խորհրդանշել է բարձրաշխարհիկ եւ հոգեւոր իշխանություն: Արքայական մատանին միշտ փոխանցվել է հաջորդ թագավորին: Ժողովրդական հավատալիքներում այն ունեցել է հմայական իմաստ, համարվել հուռթք: Մատանին նաեւ ամուսնական միության նշան էր: Հելլենիստական շրջանում (մ. թ. ա. Գ.-Ա. դդ.) մատանիների քարերը ուռուցիկ էին:

Սոնասարի մատանիներից մեկի վահանակը շրջանաձեւ է, ակնապակին՝ մուգ կապտավուն, առանց պատկերի (16Х16 մմ), տակը փակ: Մատանիներից երկրորդի վահանակը օվալաձեւ է (27Х18 մմ), տակը փակ, ակնաքարը մուգ սերդոլիկ : Ուռուցիկ վերին մասում փորագիր պատկերված է Աթենասը, գետնին կանգնած, դեպի ձախ (աղ. VIII , 4, 5, 6, 7): Արմունկով հենվել է պատվանդանին եւ զբաղեցրել պատմուճանի վեր բարձրացրած փեշը: Հետեւում նիզակը՝ սուր ծայրը վերեւ թեք դրված դիրքով: Առաջ պարզած աջ ձեռքին կանգնած է բու թռչունը, գլխին կիսագնդաձեւ սաղավարտ է, որի հետեւից դուրս է եկել հերափունջը: Դեմքին երեւում է միայն խոշոր քիթը: Երկար շապիկը գոտեւորված է կրծքի տակ: Կրծքի վերին մասը եռանկյունաձեւ բացված է: Ուղղահայաց ծալքերով պատմուճանը աջ ոտքի վրայով իջնում է մինչեւ ոտնաթաթը: Փորագրությունը խորը եւ հստակ չէ: Պահպանվածությունը լավ է: Ինչպես հայտնի է Աթենասը (լատինական Միներվան) Հունաստանի գլխավոր աստվածներից մեկն էր, Էլլադայի ամենասիրած աստվածուհին: Աթենասը հունական դիցաբանությունում իմաստության, խոհեմության, արդարացի պատերազմի, երկնքի, կայծակի, պտղաբերության աստվածուհին էր, աթենական ժողովրդի հովանավորը, քաղաքի գլխավոր աստվածությունը[28]: Նրա գլխավոր տաճարը Պարթենոնն էր, որտեղ կանգնած էր փղոսկրով եւ ոսկով պատած Ֆիդիասի պատրաստած Աթենասի հսկա արձանը (մ.թ.ա. 438 թ.)[29]: Նա ռազմատենչ աստվածուհի էր: Միաժամանակ արհեստների, գիտության հովանավոր Աթենասը ամենից ավելի պատկերվել է երկար զգեստով եւ նիզակագեն, վահանով ու սաղավարտով: Նրա ոտքերի մոտ հիմնականում նստած էր նրա սրբազան բու թռչունը, սրբազան ծառը ձիթենին էր[30]:

---

26 Տե՛ս **М. И. Максимова**. Боспорская камнерезная мастерская. “Советская Археология”, 1957, թ. 4. էջ 75-78:

27 Տե՛ս **Ժ. Դ. Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը…, էջ 33-34, աղ. XVI, 5-7: **Ժորես Խաչատրյան**, Հայաստանի անտիկ շրջանի ոսկե մատանիները. «Հին Հայաստանի ոսկին», Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Երեւան, 1997, էջ 13-15:

28 Տե՛ս “Мифы Народов Мира” (МНМ), Энциклопедия. т. I, М., 1987, էջ 125-128: “Словарь Античности”. М., 1989, էջ 62:

29 Ֆիդիասի քանդակի հռոմեական ընդօրինակությունը, տե՛ս «Դիցաբանական բառարան», էջ 7-8:

30 Տե՛ս МНМ, էջ 125-128:

Մեզ են հասել Աթենասի շուրջ տասը արձաններ: Միրոնի «Աթենասը եւ Մարսին», լայնորեն տարածված էր Վալետրիի Աթենասը, Լուվրում պահվող «Մեդիչիի Աթենասը» եւ այլն: Պահպանվել են նաեւ աստվածուհու մեծ քանակությամբ արձանիկներ Օրինակ. Աթենասը ձեռքից բաց է թողնում բուին[31]: Նման պատկեր է նաեւ Սոնասարի ինտալիայի ուռուցիկ մակերեսին:

Անհետաքրքիր չեն օղակաձեւ (տրամ. 25 մմ) կանգնած պատանու պատկերով երկու ականջօղերը (աղ. IX, 1): Պատկերված դեմքը տափակ է, բարակ թեւերով բռնել է կողքը: Կիսակլոր գլխարկի ծայրերը իջնելով ծածկում են ուսերը, բաց թողնելով, սակայն, ճակատի խոպոպները: Որովայնի հատվածում, զգեստի բացվածքի պատճառով, որովայնը եւ սեռական օրգանները մերկ են (աղ. IX, 2): Վերջինս բնորոշ է Ատտիսին, որը մ.. թ. ա. Ա. դ. սկսել է պատկերվել նման բացվածք ունեցող զգեստով[32]: Երկար ոտքերով հենվել է երախը բաց առյուծների գլխին (Մայր Աստվածուհի Կիբելայի կենդանական խորհրդանիշը). (աղ. IX, 3-4):

Փռյուգիական աստված Ատտիսը բնության մեռնող ու հառնող աստված էր: Նրա պաշտամունքը միահյուսված էր աստվածների մայր Կիբելայի պաշտամունքին: Նա Կիբելայի սիրեցյալն էր: Աստվածամոր եւ նրա պատանի որդու պաշտամունքը հին շատ կրոնների էր բնորոշ: Դրանք ներկայացնում էին աստվածային զույգերի, որոնցից պատանիները դիցաբանությունների մեծ մասի մեջ մարմնավորում են մեռնող եւ հարություն առնող աստվածների (Կիբելա-Ատտիս, Իշտար-Թամմուզ, Իզիդա-Օզիրիս, Աֆրոդիտե-Ադոնիս եւ այլն), որոնք մեծ մոր կամ ամուսինն են, կամ սիրեցյալը: Նրանց պաշտամունքային արարողությունները սերտորեն կապված էին միմյանց հետ եւ կատարվում էին միասին: Դա կապված էր բնության զարթոնքի, նրա ցիկլային հավատալիքների հետ: Հին աշխարհում այս զույգ աստվածություններին նվիրված մի շարք առասպելներ են հայտնի, որոնք թեեւ որոշ դեպքերում իրարից մասամբ տարբերվում էին, սակայն ունեին նաեւ շատ ընդհանրություններ: Դրանք մի ընդհանուր գաղափարական հենքով էին կառուցված[33]:

Նման առասպելներ են պատմվել նաեւ Հայաստանում: Դրանցից մեկը Արա Գեղեցիկի ու Շամիրամի առասպելն է, որի մասին մեզ հաղորդում են Մովսես Խորենացին[34] եւ Անանուն հեղինակը[35]:

Փռյուգիական աստված Մեծ Մոր եւ սիրեցյալի՝ Ատտիսի պաշտամունքը լայնորեն տարածված էր Փոքր Ասիայում: Կիբելան ապրում էր լեռներում, շրջում էր առյուծներ եւ հովազներ լծված կառքով[36]: Ատտիսի առջեւի մասում երեւում է առնանդամը, պորտը, վերեւում ամորձիքներ: Մեջքի կողմից առյուծի գլխի ներքեւում պատկերված է

31 Տե՛ս «Դիցաբանական բառարան» էջ 7-8:

32 Տե՛ս **М. М. Кобылина**, Изображение восточных божеств в Северном Причерноморье в первые века н. э., М., 1978, էջ 14-15:

33 Տե՛ս **Գ. Ղափանցյան**, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երեւան, 1945, էջ 50-51:

34 Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, I, ԺԵ.:

35 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1978, էջ 225:

36 Տե՛ս "Мифологический словарь", Л., 1961, էջ 117:

հատած նուռ: Առասպելներից մեկում մայրը (Կիբելան) Ատտիսով հղիացել էր՝ կրծքին դնելով նռենու պտուղը, որը աճել էր Ատտիսի երկյակի՝ կիսամարդ-կիսահրեշ Ագդիստիսի որդեծնական կտրված օրգաններից[37]:

Այս փոքր ականջօղերի վրա ներկայացված է Մայր Աստվածուհու՝ Կիբելայի եւ իր որդի-սիրեցյալի առասպելը: Գալերը (քուրմերը) կրոնական գրգռվածության բարձրագույն աստիճանի հասնելով ամորձատում էին իրենց եւ մարմնի կտրատված մասերը նետում էին դաժան դիցուհու արձանին: Այնուհետեւ որդեծնության կտրատված մասերը զգուշորեն փաթաթում եւ թաղում էին հողում կամ Կիբելայի տաճարի ստորգետնյա սրահներում, որտեղ զոհաբերված արյան հետ դրանք օգտագործում էին Ատտիսի վերստին կյանքի կոչելու եւ բնության հարությունը արագացնելու համար[38]: Հայտնի է, որ մ. թ. ա. 204 թ. Հանիբալի դեմ մղված երկարատեւ պայքարի ավարտին հռոմեացիները ընդունեցին դիցամոր փռյուգիական պաշտամունքը: Կիբելայի հետ Հռոմ տարվեց նաեւ իր պատանի սիրեցյալի կամ որդու պաշտամունքը: Դիցուհու պատկերով, ծնծղաների, թմբուկների, սրինգների եւ եղջերափողերի երաժշտության ներքո նրանք թափորով անցնում էին Հռոմով[39]: Կայսր Կլավդիոսն (41-54 թթ.) ավելի առաջ գնաց, փռյուգիական պաշտամունքի մեջ մտցրեց սրբազան ծառի պաշտամունքը[40]:

Ատտիսը, որոշ տվյալների համաձայն, հովիվ է եղել եւ սրինգ է նվագել: Ատտիսը պատկերվել է տարբեր հորինվածքներով, միաձուլված այլ աստվածների հետ, թեւավոր, սրբազան պար բռնած, սրինգ նվագելիս եւ այլն: Հայտնի են նրա արձանիկները՝ սրինգ նվագելիս[41], գավազանով եւ առանց մահակի: Հետաքրքիր են Հայաստանից հայտնաբերված սրինգ նվագող Ատտիսին պատկերող կավե արձանիկները, որոնցից երեքը ի հայտ են եկել Արտաշատից (աղ. XIII, 1, XIV, 1, 3), մեկական օրինակ Մարտունու շրջանի Երանոս գյուղից (աղ. XIII, 4) եւ Վանաձորից (աղ. XIII, 2): Վերջինիս մակերեսը պատած է կարմիր ներկով[42]:

Սոնասարի դամբարանից մեզ է հասել արծաթյա մի դրամ: Տետրադրախմա, արծաթ, Աթենք, մ. թ. ա. 104 թ.: 16,02 գ. 30,0մմ, 12 ժ ՀՊԹ:

Դիմ. Աթենասի գլուխը, սաղավարտով, աջ (աղ. X, 1-2): Կետավոր շրջանակ, դարձ. գրությունը վերեւում ΑΘΕ ձախից ΑΜΦ[Ι]ΚΡΑ/ΤΗΣ/ΑΡΙ/[Σ]Τ, աջից ΕΠ[Ι]/ΣΤΡΑ/ΤΟΣ: Բու՝ ամֆորայի վրա կանգնած, դափնեպսակով շրջապատված: Ամֆորայի վրա՝ Β [?],

37 Տե՛ս **Ջեյմս Ջորջ Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, Մոգության եւ կրոնի ուսումնասիրություն (ռուսերենից թարգմ. Սիրուշ Բաղդասարյան-Թափալցյան), Երեւան, 1989, էջ 412: **Джеймс Джордж** Фрезер, Золотая ветвь, Иследования магии и Религии. М. 1980, էջ 389:

38 Տե՛ս **Ջ. Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, էջ 442:

39 Տե՛ս **Дж. Дж. Фрезер**, Золотая ветвь, էջ 387-391:

40 Տե՛ս անդ, էջ 388. " Словарь Античности", М. 1989, էջ 26:

41 Տե՛ս **М. М. Кобылина**, նշվ. աշխ., էջ 14, նկ. 16, 23, 24 ա: **M. J. Vermaseren**. The Legend of Attis in Greek and Roman Art. Leiden Brill, 1966, էջ 14-19, pl IV, 12 VII, 4, VIII, 3, XXVIII, 4, XXIX, 1:

42 Տե՛ս **Zhores D. Khachatryan**, Representations of music on Armenian terracottas and toreutics (second millennium B. C.-third century A. D.). Imago Musicae XVIII/XIX,- 2001/02, էջ 92-94, թ. 13-18. **Ժորես Խաչատրյան**, Կավե արձանիկների պատկերագրությունը, ՊԲՀ, 2002, թ. 1, էջ 198-201, աղ. 2, 1-5:

Աղյուսակ VII, նկ. 4

Աղյուսակ VII, նկ. 5

Աղյուսակ VIII, նկ. 1,2,3

Աղյուսակ VIII, նկ. 4,5,6

Աղյուսակ VIII, նկ. 7

Աղյուսակ X, նկ. 1,2

Աղյուսակ X, նկ. 3

Աղյուսակ X, նկ. 4

Աղյուսակ XI, նկ. 1

Աղյուսակ XI, նկ. 2

Աղյուսակ XI, նկ. 3

Աղյուսակ XII, նկ. 1

Աղյուսակ XII, նկ. 2



Աղյուսակ XII, նկ. 3

Աղյուսակ XIII, նկ. 1



Աղյուսակ XIII, նկ. 2

Աղյուսակ XIV, նկ. 1

Աղյուսակ XIV, նկ. 2

Աղյուսակ XIV, նկ. 3

Աղյուսակ XIV, նկ. 4

ամֆորայի տակ՝ II: Դաշտում աջից՝ ցորենի երկու հասկ[43]: Դժվարանում ենք ասել՝ դամբարանում միայն մեկ դրամ է եղել, թե՞ ոչ:

Ուշադրության արժանի են արծաթե, կտրվածքում կլոր լարից պատրաստված ապարանջանները (չորսն ամբողջական են): Դրանք ձեւով քիչ օվալաձեւ են: Առաջինը երեք մասի է բաժանված, ծայրերը բաց, ուղիղ կտրված (տրամ. 11,8 սմ), առանց զարդերի (աղ. XI, 1-2): Երկրորդ ապարանջանը նույն եղանակով է պատրաստված, ամբողջական է, շրջանաձեւ, ծայրերը քիչ հաստանում են, ի տարբերություն առաջինի, երկուական փորագիր գծիկներ ունեն (տրամ. 11,10 սմ) եւ բացվածքը ավելի փոքր է (աղ. XII, 1-2): Այն վերին կեսում հարդարված է, իրարից քիչ հեռու երկու տեղում երեքական փորագիր շրջանագծերով: Երրորդ ապարանջանը երկու մասի է բաժանված, ձեւով ու հարդարանքով նույնն է, ինչ երկրորդ ապարանջանը (տրամ. 15,11 սմ), միայն բացվածքը ավելի մեծ է: Չորրորդ ապարանջանը երկու մասի է բաժանված, տարբերվում է նախորդներից: Այն ավելի հաստ լարից է պատրաստված, դեպի ծայրերը աստիճանաբար հաստանալով ավարտվում է ուղիղ կտրվածքով: Ավելի հարուստ հարդարանք ունի (տրամ. 12,10 սմ), փորագիր շրջանների մեջ շեղանկյուն գծերով է լցված: Սոնասարի ապարանջանները աղերսվում են Սիսիանի դամբարանի ապարանջանների հետ, միայն վերջիններիս զարդերն ավելի հարուստ են[44]: Հայաստանում դրանք հայտնի են նաեւ Մինգեչաուրի դամբարանից[45]:

Նման ապարանջաններ կրում էին եւ՛ թեւերին, եւ՛ ոտքերին, ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիք: Այդ մասին են վկայում Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկները (մ. թ. I-II դդ.)[46]: Հայկական հերոսական էպոսում Խանդութը ոտքերին կրում է ապարանջաններ. «Նա ոտքերին ուներ, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր գլխով ու մարմնով դրանց միջով անցնել»[47]:

Այժմ անդրադառնանք այն գտածոներին, որոնք մեզ են հասել լուսանկարներով (աղ. X, 4): Դրանցից ամենակարեւորը արծաթյա կիսագնդաձեւ թասն է (աղ. X, 4): Դժբախտաբար այն մաքրված չէ հողից եւ ժանգից, եւ լուսանկարը արտաքին մի հատվածին է վերաբերում ու հատակին: Երեւում են դրա մինչեւ պսակի ներքեւից անցնող ակոսավոր գոտին հասնող կանելյուրները եւ հատակն ընդգծող համակենտրոն երեք շրջանը: Նշված հատկանիշներով այն աղերսվում է Սիսիանի արծաթյա կիսագնդաձեւ թասերի, հատկապես շքեղ նմուշի հետ[48]: Բնականաբար Սոնասարի թասի տրամագի-

43 Դրամը որոշել է դրամագետ Ռ. Վարդանյանը. **B. Head**, Historia Numorum. Oxford, 1911. էջ 384:

44 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը, էջ 55, աղ. VII, 1-4:

45 Տե՛ս **С. М. Казиев**, Альбан кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, աղ. XXXVII, 1, XXXVIII, 6:

46 Տե՛ս **Ж. Д. Хачатрян**, Об античной коропластике Армении. "Вестник древней истории". М., 1979, թ. 3, էջ 94-99, աղ. III, V, 1. **Zh. D. Khachatryan**, Representatians music on Armenian…, էջ 89,90, fi 9, 5-10, **Ժ. Խաչատրյան**, Կավե արձանիկների պատկերագրությունը, աղ. 1, 3, 2,6, 7:

47 **Ս. Հարությունյան**, Հայ ժողովրդական վեպը (Կուլտուր-պատմական ակնարկ). «Սասնա ծռեր», Երեւան, 1977, էջ 626:

48 Տե՛ս **К. В. Тревер**, Памятники греко-бактрийского искусства, М.-Л., 1941, էջ 35-36. **Ժորես Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը, էջ 48-49, աղ. IV, 1, 2, V, 1-5: **J. D. Khachatryan**. Silver bowls and basins of Armenia in the late Hellenistic Period. Iranica Antique. vol. XXIV, 1989, pl. II, a, b,; **Zhores Khachatryan.** The

ծը, բարձրությունն ու քաշը հնարավոր չէ պարզել: Չափերով այն պետք է լինի Սիսիանի կիսագնդաձեւ թասերին մոտ: Դժվար է ենթադրել Սոնասարի թասի վրա արձանագրություն առկա է, թե ոչ: Հարկ է նշել, սակայն, որ Սիսիանի կիսագնդաձեւ թասն ունի ավելի շքեղ հարդարանք: Թասի դաշտն արտաքուստ բաժանված է ութ հավասար հատվածների, որոնցից առաջին չորսը հարդարված են կանելյուրներով, մյուս չորսը՝ սուր երկարավուն տերեւներով, ակներեւաբար տերեւներով եւ փոքր- ինչ ոճավորված խաղողի որթերով:

Թասերը դրվագազարդ են, պատրաստված են ձուլելու եղանակով, զարդաձեւերը՝ փորագրելու եւ դրվագելու հնարքով:

Կիսագնդաձեւ թասերն օգտագործվել են աստվածներին նվիրված սրբազան արարողություններում՝ քաղցրահամ նյութերով հեղումներ կատարելու համար: Դրանք հետագայում կորցրել են իրենց նախնական իմաստը, ձեռք բերել կիրառական լայն նշանակություն[49]:

Սկավառակաձեւ հարթ մակերեսով, եզրերը ատամնաձեւ հարդարված արծաթյա իրը, հավանաբար հայելի է, որը հաճախ էր դրվում մահացածների հետ (աղ. XIII, 1): Հայելին կապված էր անդրշիրիմյան աշխարհի հետ: Ինչ վերաբերում է եռատերեւ պսակով մի կանթանի սափորին, այն ամենայն հավանականությամբ օգտագործվել է հեղումների համար (աղ. X, 3):

Այսպիսով, Սողքի (Սոնասարի) դամբարանի, թեկուզ մասամբ մեզ հասած ոսկե, արծաթե գտածոները, Աթենասի արծաթյա դրամը, կահկարասիները, (որոնք ձեւերով որոշակի նմանություն ունեն Սիսիանի դամբարանի եւ կավե արձանիկների վրայի կահկարասիներին. աղ. XIII, 1-3), բազմազան ու բազմատեսակ առարկաները, փաստում են տիրոջ՝ շքեղության նկատմամբ ունեցած հակումները, հուշում են, որ հանգուցյալը գեղեցիկ սեռին է պատկանել եւ ոչ շարքային, հավանաբար միջին խավի ներկայացուցիչ է: Թեեւ նյութերի մի մասը աղերսվում է Սիսիանի դամբարանի նյութերի հետ, սակայն վերջինս իր գավաթի վրայի արամեերեն արձանագրության համաձայն անկասկած եղել է Սյունիքի կառավարիչը: Արախսզատ նշանակում է «աստվածների կողմից պաշտպանվող» կամ «աստվածների հովանավորության տակ ծնված»[50]: Այդպես էին իրենց կոչում, անշուշտ, թագավորներն ու բարձրաստիճան իշխանավորները: Սիսիանի դամբարանը լավ մշակված կրաքարերով կեղծ թաղ է, դիակիզում է կատարված, ուղեկցվող նյութերը շատ հարուստ են եւ այլն: Սոնասարի դամբարանը եւս պատկանում է նույն ժամանակին մ. թ. ա. Ա. դարի երկրորդ կեսին, ինչպես Սյունիքի դամբարանը:

---

tomb of Sisian (Second half of the ist century BC). Parthica incontri di culture nel mondo antico. Pisa. Roma. 2011. Fig. 7, 1:

49 **К. В. Тревер**. Греко-бактрийская золотая чаша, ''Сокровища Эрмитажа'', М.-Л., 1949, էջ 101-102:

50 **А. Г. Периханян**, Арамейская надпись на серебряной чаше из Сисиана. "Историкофилологический журнал", 1971, թ. 3, էջ 78-81, նկ. 1, 2: